բարեկամները, դաշնակիցները, համայնքի անդամները: Խորհրդիմաստների մոգական ուժը կարող էր ուղեգորգին հաղորդել բազմակողմանի ընույթ, և վրան նստած անգամ չար մտադրություններ ունեցող հյուրը կարող էր վնասազերծվել անկվածի չարխափան հատկությունների շնորհիվ: Օժիտի հետ տրվող հարսանեկան ուղեգորգերի մեծ խմբում առկա են նաև պտղաբերքի զաղափարը խորհրդանշող զարդանախշեր:

4. Տակավին XIX դ. վերջերին- XX դ. սկզբներին գործածված գորգերում գիտակցված էր զարդանկարի սեմանտիկ, սրբացված ընույթը, որը, ազգագրական փաստերից բացի, վկայվում է նաև հետևյալ հանգամանքով՝ Արցախում և Սյունիքում հատկապես սիրված մի քանի բարդ մեղալիոն, ըստ որում Արծվագորգինը և կեռխաչով գորգերինը, երբեք չեն հանդիպում ուղեգորգերում: Առավել սրբացված, համազգային ընույթի հերալդիկ մեղալիոնները, ըստ երևույթին, ավանդաբար փոխանցված արգելքի թելադրանքով, չեն ընդգրկված ուղեգորգերի հորինվածքում: Դա է հաստատում Արծվագորգի ուղեգորգային տարբերակը, որտեղ մեղալիոնը խիստ փոփոխված է, ընդ որում անհետացել են հորինվածքի հիմքում ընկած հակիմաստ, կենդանակերպ զարդանախշերը, մնացել են միայն բուսական տարրերը և ճաճանչները: Հետևապես, կարելի է ենթադրել, որ նվիրագործումը կապված է եղել հենց դուրս մնացած զարդանախշերի հետ:

5. Վերջապես, կարևոր են ոճական և իմաստային այն բազմաթիվ օղակները, որոնցով ուղեգորգերն անմիջականորեն կապվում են միջնադարյան վիշապագորգերի և այլ գորգերի հետ: Վերջիններիս քնորոշ շատ զարդագոտիներ պահպանվել են հիմնականում ուղեգորգերի հորինվածքում:

Այս բոլոր հանգամանքներն ուղեգորգերը դարձնում են գորգարվեստի և առհասարակ ժողովրդական արվեստի ուսումնասիրության համար արտակարգ շահեկան, ուրույն մի ճյուղ, և կարևոր դարձնում դրանց բոլոր տարբերակների վավերագրումն ու հավաքումը:

Էդմոնդ Սիմոնյան

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ԹԱՊԻՆԳ-ՏԵՍՏԻ

/ Խակասական սաղայ ցեղախմբի օրինակով/

1. Նյարդային համակարգի և խառնվածքի ժառանգորեն պայմանավորված ընդհանուր հատկանիշների վերաբերյալ մեր կողմից պոպուլյացիոն տվյալների հավաքման կապակցությամբ անցկացրինք խակասների

համարաբար միատարր՝ ,, մաքուր,, խմբերից մեկի՝ սաղայների[1] ,, հոգեկան /անհատական/ տեմպի,, ուսումնասիրություն, կիրառելով թապինգ-տեստի մեթոդը /J.Frischeisen-Köhler , 1930 /, Տ.Պանտելեևայի և Ն.Շլյախտայի բարեփոխությամբ /Т.А.Пантелеева, Н.Ф.Шляхта, 1978/:

2. Ըստ այդ մեթոդի, համապատասխան հրահանգ ստանալուց հետո ամեն մի անձ խիստ միատեսակ պայմաններում մաքսիմալ / T_{max} / և օպտիմալ / T_{opt} / տեմպով մատիտով կետեր է դնում թղթի վրա գծված շրջանակներում / երկուական՝ ամեն մի տեմպի համար/, յուրաքանչյուր շրջանակի հատկացվում է տաս վայրկյան: Այնուհետև հաշվվում է շրջանակների ամեն մի զույգի կետերի միջին քանակը: Սաղայցի 91 տղամարդուց և 108 կնոջից այդ կերպ ստացված ընտրության տվյալները վիճակագրորեն մշակվեցին: Ընտրորդները ուսումնասիրվեցին նաև ըստ երեք տարիքային խմբի / 20-24, 25-39 և 40-60 տարիքային սանդղակներ կամ I , II և III խմբեր/, ինչը հնարավորություն տվեց հաշվի առնելու նաև տարիքային գործոնի ազդեցությունը:

3. Թապինգ-տեստի նշված ցուցանիշներն ընտրելիս նկատի է առնված, նախ, այն, որ երկվոր յակային մեթոդով բացահայտված է դրանց զգալի կախվածությունը գենոտիպային գործոններից /И.В.Равич-Щербо,1974,1978, Т.В.Василец ,1974, վերը նշված հեղինակներ և այլն/, ապա՝ հարմարությունը դաշտային պայմաններում և կայունությունը, որը հաստատվում է միաժամանակյա զանգվածային դիտումներով ոչ-ազգակից անձերից ստացված մեր տվյալներով /տես աղյուսակ 1/:

Կետերի քանակի տարբերությունը շրջանակների ամեն մի զույգում	Տղամարդիկ		Կանայք	
	T_{max}	T_{opt}	T_{max}	T_{opt}
Արդյունքներով մոտ զույգեր,	79կամ	86կամ	92կամ	90կամ
ընդամենը՝	86,8o/o	94,5o/o	85,2o/o	83,3o/o
5 և ավելի կետով տարբերվող զույգեր,	12կամ	5կամ	16կամ	18կամ
ընդամենը՝	13,2o/o	5,5o/o	14,8o/o	16,7o/o

1 Սաղայները հիմնականում ընակվում են Կրասնոյարսկի երկրամասի Խակասական ԻՄ-ի Ասքիզի լեռնոտ և անտառոտ շրջանի ավաններում և ուլուսներում: Հոգեբանա-Ֆիզիոլոգիական նյութը Խակասիայում հավաքվել է 1978-ի ամռանը, Մոսկվայի համալսարանի Մարդաբանության ինստիտուտի Խակասական գիտարշավի /ղեկավար՝ պատմ.գիտ.թեկնածու Ի.Վ.Պերևոզչիկով/ կազմում աշխատելիս:

Ըստ այդ տվյալների, կանանց T_{max}-ի և T_{opt}-ի, ինչպես և աղամարդկանց T_{max}-ի կայունության չափերը մոտավորապես հավասար են, սակայն վերջիններիս օպտիմալ տեմպը առավել կայուն է դրսևորվում:

4. Սաղայցիների խմբային տվյալները թապինգ-տեստի երկու ցուցանիշով հետևյալն են.

Ցուցանիշ / Տարիքային խումբ	Տղամարդիկ n	Տղամարդիկ M±m	Տղամարդիկ σ	Տղամարդիկ V	Կանայք n	Կանայք M±m	Կանայք σ	Կանայք V
T_{max} I	24	60,37±0,50	2,47	4,09	23	57,76±0,45	2,15	3,72
II	34	62,29±0,36	2,13	3,42	34	58,47±0,35	2,02	3,59
III	33	59,20±0,44	2,54	4,29	51	55,26±0,47	3,37	6,10
					/ 34*	/54,64±0,58	3,40	6,22
միացյալ	91	60,64±0,34	3,26	5,37	108	56,66±0,32	3,32	5,86
					/ 91*	/56,94±0,35	3,37	5,91
T_{opt} I	24	32,58±0,49	2,42	7,43	23	34,37±0,23	1,09	3,17
II	34	33,41±0,46	2,70	8,08	34	36,47±0,28	1,62	4,44
III	32	33,03±0,42	2,39	7,23	51	30,95±0,33	2,35	7,59
					/ 34*	/32,15±0,49	2,89	9,00
միացյալ	90	32,80±0,39	3,70	11,28	108	33,40±0,36	3,80	11,38
					/91*	/34,44±0,34	3,30	9,58

Հաշվումները ցույց են տալիս T_{max}-ի սեռային դիմորֆիզմը: Տղամարդկանց և կանանց խմբերի միջինների տարբերությունը Սթյուդենտի չափանիշով հավաստիության երրորդ մակարդակից էլ վեր է /t=7,71, P>0,999 /t_{st} = 3,4/: Այն խիստ հավաստի է նաև երկու սեռի բոլոր միանման տարիքային խմբերի միջև, բացահայտելով, այսպիսով, աղամարդկանց մաքսիմալ տեմպի ավելի մեծ չափը: T_{opt}-ի միջինների տարբերությունը սեռերի միջև հավաստի է միայն համահավասար ընտրությունների դեպքում, ի հայտ բերելով կանանց օպտիմալ տեմպի ավելի բարձր մակարդակը ինչպես միացյալ /t = 3,21, P > 0,995/, այնպես էլ I ու II

տարիքային խմբերում: III տարիքային խմբերի տարբերությունը հավաստի չէ /t = 1,35, P < 0,95/:

5. Եթե դիտվում է կանանց երկու ցուցանիշի դանդաղեցում տարիքավոր / III / հասակում, ապա արական սեռի համար / այդ օրինաչափությունը տարածվում է միայն T_{max}-ի վրա: Երկու աղյուսակն էլ վկայում են հասուն տղամարդկանց T_{opt}-ի սեռատարիքային բարձր կայունությունը: Հետաքրքիր է, որ և T_{max}-ի և T_{opt}-ի համար I տարիքային խմբերի տարբերությունը III խմբերից, երկու սեռի դեպքում էլ նվազ է, քան II խմբերինը: Դա, թերևս, հակառակ դրական տվյալների, խոսում է այն մասին, որ նյարդային համակարգի թափինգ-տեստով ընութագրվող հատկանիշների կազմավորումը 20-24 տարեկան հասակում տակավին չի ավարտվել:

6. Բերված տվյալները հաստատում են նաև հնչին դրական կորելացիոն կապը երկու տեմպի ցուցանիշների միջև, ըստ որում տղամարդ սաղայներինը հավասար է + 0,191, իսկ կանացը ավելի պակաս է՝ +0,134: Այսպիսով, T_{max}-ը և T_{opt}-ը կարելի է դիտել որպես համեմատաբար անկախ ցուցանիշներ, որոնք, հաշվի առնելով վերը բերված արդյունքները, թերևս հետաքրքիր կլինեն էթնո-տարածքային խմբերի ընութագրման և համեմատման համար, մանավանդ նյարդային համակարգի և խառնվածքի ժառանգականորեն պայմանավորված ընդհանուր հատկանիշների մի շարք այլ ցուցանիշների համադրությամբ՝ համալրային ուսումնասիրության դեպքում:

Աննա Փալիկյան

ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՆ ԵՎ ԱՐԴԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Արդի ժողովուրդների էթնոգենեզի հետազոտությամբ զբաղվում են մի շարք հարակից գիտություններ: Այս կամ այն ժողովրդի ծագումը կոմպլեքսային բարդ պրոցես է: Դա թե լեզվի կազմավորումը, թե մշակութային ընութագրի ու ֆիզիկական յուրահատկությունների և այլևայլ հատկանիշերի ձևավորումն է:

2. Մարդաբանության դերը էթնոգենետիկ ուսումնասիրության մեջ որոշվում է երկու պարագայով. ա/ այս կամ այն էթնոսի ֆիզիկական հատկանիշերը կապված չեն ոչ լեզվի / որով խոսում է տվյալ

ՀՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ